



Ընդունվել է՝ 6 դեկտեմբերի 2019թ.

Հրապարակային

Հրապարակվել է՝ 12 դեկտեմբերի 2019թ.

GrecoRC4(2019)21

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԿՐՈՐԴ ՁԵԿՈՒՅՑ ԿԱՅԱՍՄԱՆ

Ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից՝ իր 84-րդ լիագումար նիստում
(Ստրասբուրգ, 2019 թվականի դեկտեմբերի 2-6)

ԳՐԵԿՈ-ի քարտուղարություն
Եվրոպայի խորհուրդ
F-67075 Ստրասբուրգ
+33 3 88 41 20 00

www.coe.int/greco

Մարդու իրավունքների եւ օրենքի
գերակայության գլխավոր
տնօրինություն
Տեղեկատվական հասարակության եւ
հանցագործությունների դեմ
պայքարի հարցերով տնօրինություն

Փ
Ն
Հ
Վ
Տ
Կ
Տ
Ն
Ղ
Ձ
Ը
Ը
Ը
Ը
Ը
Ը
Ը
Ը
Ք
Լ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցում գնահատվում են Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումները՝ ուղղված «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում» Հայաստանի վերաբերյալ չորրորդ փուլի գնահատման զեկույցում ներկայացված առաջարկությունների իրականացմանը (տե՛ս 2-րդ պարբերությունը):

2. Հայաստանի վերաբերյալ [չորրորդ փուլի գնահատման զեկույցն](#) ընդունվել է ԳՐԵԿՈ-ի 69-րդ լիազումար նիստի ժամանակ (2015 թվականի հոկտեմբերի 16) եւ հրապարակվել 2016 թվականի փետրվարի 25-ին՝ Հայաստանի կողմից թույլտվություն ստանալուց հետո:

3. [Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցի](#) չորրորդ փուլն ընդունվել է ԳՐԵԿՈ-ի 78-րդ լիազումար նիստի ժամանակ (2017 թվականի դեկտեմբերի 8-ին) եւ հրապարակվել 2017 թվականի դեկտեմբերի 21-ին՝ Հայաստանի կողմից թույլտվություն ստանալուց հետո:

4. Ինչպես պահանջվում է ԳՐԵԿՈ-ի ընթացակարգային կանոններով, Հայաստանի իշխանությունները ներկայացրել են հանձնարարականների կատարմանն ուղղված միջոցների իրականացման՝ Իրավիճակի մասին զեկույց: Այս զեկույցն ստացվել է 2019 թվականի հունիսի 28-ին եւ հետագայում ներկայացված տեղեկությունների հետ հիմք է ծառայել Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցի համար:

5. Պարտավորությունների կատարման առնչությամբ համազեկուցողներ նշանակելու համար ԳՐԵԿՈ-ի կողմից ընտրվել են Վրաստանը եւ Հունգարիան: Վրաստանի կողմից համազեկուցող է նշանակվել տկն Գուլիսա ԿԱԽՆԻԱՇՎԻԼԻՆ, իսկ Հունգարիայի կողմից՝ պրն Բալինտ ՎԱՌՌՈՆ: Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցի մշակման հարցում նրանց օժանդակել է ԳՐԵԿՈ-ի քարտուղարությունը:

II. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

6. ԳՐԵԿՈՒՆ իր Չորրորդ փուլի գնահատման զեկույցում Հայաստանին ներկայացրել է 18 հանձնարարական: Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցում ԳՐԵԿՈՒՆ հանգել է այն եզրակացության, որ v, x, xii, xiii եւ xvii հանձնարարականներին կատարվել է բավարար չափով անդրադարձ: i-iv, vi-ix, xi, xiv, xv եւ xviii հանձնարարականները կատարվել են մասամբ, իսկ xvi հանձնարարականը չի կատարվել: Ընթացիկ հանձնարարականներին համապատասխանության հարցը դիտարկվում է ստորեւ:

Կոռուպցիայի կանխարգելումը պարզամավորների շրջանում

Հանձնարարական i.

7. ԳՐԵԿՈՒՆ առաջարկել է Ազգային ժողովում ապահովել եւ էլ ավելի բարձրացնել օրենսդրական գործընթացների թափանցիկությունը՝
i) ապահովելով, որ օրենքի նախագծերի շուրջ հանրային քննարկումների պահանջը գործնականում կատարվի, եւ որ Ազգային ժողով ներկայացված օրենքի նախագծերը, ինչպես նաեւ փոփոխությունները հրապարակվեն ժամանակին, եւ
ii) ձեռնարկելով համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ հանձնաժողովների նիստերի բովանդակությունը եւ դրանց մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվեն, ինչպես նաեւ հանձնաժողովներն առավել ակտիվորեն կիրառեն խորհրդարանական լսումներ կազմակերպելու հնարավորությունը:

8. Հարկ է նշել, որ համաձայն Պարտավորությունների կատարման զեկույցի, այս հանձնարարականը կատարվել է մասամբ: ԳՐԵԿՈՒՆ նշել է օրենսդրության եւ իրավական կարգավորումների մի շարք բարեփոխումներ՝ օրենսդրական գործընթացն առավել թափանցիկ դարձնելու նպատակով, ինչպիսիք են «e-draft.am» նորաստեղծ կայքում օրենսդրական նախագծերը հրապարակելու պարտավորությունը եւ Ազգային ժողովում գրանցված օրենքների

նախագծերի հրապարակումն Ազգային ժողովի պաշտոնական կայքում՝ ցանկացած շահագրգիռ մարմնի կողմից այդ օրենքների նախագծերի վերաբերյալ մեկնաբանություններ թողնելու հնարավորությամբ: ԳՐԵԿՈ-ն նաեւ նշել է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով (ԱԺ ԿՕ) բարելավվել են մշտական հանձնաժողովների նիստերի վերաբերյալ կարգավորումները, եւ ընդլայնվել է խորհրդարանական լսումներ նախաձեռնելու հնարավորությունը: Իշխանությունները նշել են, որ հանձնաժողովների հանդիպումները դոնփակ անցկացնելու դեպքերը նվազել են: Այնուամենայնիվ, ԳՐԵԿՈ-ն նշել է, որ վերանայված իրավական դաշտը նոր է, եւ անհրաժեշտ կլինի փաստացի գործելակերպը վերագնահատել այն բանից հետո, երբ համակարգը որոշ ժամանակ գործի:

9. Հայաստանի իշխանությունները հանձնարարականի (i) մասի առնչությամբ այժմ հաղորդում են, որ 2018 թվականի դեկտեմբերի ընտրություններից հետո ձեւավորված նոր գումարման Ազգային ժողովն իր հերթական նստաշրջանը գումարել է 2019 թվականի մարտին: Իշխանությունները վերահաստատում են, որ օրենքների նախագծերը եւ դրանց հետ կապված փոփոխություններն այժմ, որպես կանոն, հրապարակվում են www.e-draft.am կայքում եւ Ազգային ժողովի կայքում՝ հաճախ զուգահեռաբար: Նրանք նշում են, որ այդ կայքերից օգտվողների թիվը 2019 թվականին զգալիորեն աճել է (մոտավորապես՝ համապատասխանաբար 30 եւ 25 տոկոսով): ՀԿ-ներն ակտիվորեն օգտվում են այս կայքերից¹: Օրենքների նախագծերին, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցերի ռեեստրում գրանցվելուց բացի, կարելի է ծանոթանալ նաեւ «Ազգային ժողովի խորհրդի որոշումներում» (խորհրդի որոշումների համապատասխան նախագծերից մինչեւ լիազումար նիստի օրակարգում ընդգրկելը): Անհրաժեշտ է հրապարակել հետեւյալ օժանդակ փաստաթղթերը՝ նախագծի հիմնավորում, բյուջեի վրա դրա ազդեցության վերաբերյալ եզրակացություն, փորձագիտական եզրակացություններ եւ

¹ <https://drive.google.com/file/d/1iAlhNjiAZezOJG-2wOU7jTvbThuWS51q/view>

կառավարության կարծիքներ: Իշխանությունները նաեւ նշում են, որ միջազգային գործընկերների հետ համատեղ մշակվել է հայեցակարգ՝ Ազգային ժողովի կայքը թարմացնելու, այն ավելի ինտերակտիվ եւ մատչելի դարձնելու նպատակով: Նրանք նաեւ նշում են, որ ընդլայնվել է համագործակցությունը ՀԿ-ների հետ: 2019 թվականի մարտին գործարկվել է ՀԿ-ների եւ Ազգային ժողովի միջեւ համագործակցության բաց հարթակ²: Այդ պահից սկսած այն օգտագործվել է հանրային քննարկումների եւ աշխատանքային հանդիպումների համար³: Ի վերջո, իշխանությունները նշում են, որ Կառավարությունը 2018 թվականի հոկտեմբերին ընդունել է հանրային խորհրդակցությունների իրականացման նոր ընթացակարգ: Իշխանությունները հստակեցնում են, որ 2019 թվականի մարտ-հոկտեմբեր ժամանակահատվածում Ազգային ժողովն արագացված ընթացակարգով ընդունել է 35 օրենքի նախագիծ կամ ընդունված բոլոր օրենքների նախագծերի (206 օրենք) 15 տոկոսը:

10. Իշխանությունները հանձնարարականի (ii) մասի առնչությամբ հաղորդում են, որ 2019 թվականի մայիսից անցկացվել է մշտական հանձնաժողովների 99, իսկ ժամանակավոր հանձնաժողովների 4 հրապարակային նիստ: Միեւնույն ժամանակահատվածում տեղի է ունեցել ժամանակավոր հանձնաժողովի ընդամենը երկու փակ նիստ (քրեական գործով նախնական քննության վերաբերյալ): Հանձնաժողովների նիստերից 55-ը (բոլոր հրապարակային նիստերը) հեռարձակվել են ուղիղ եթերով եւ ձայնագրվել են: Բոլոր նիստերը՝ ներառյալ դրանց ժամանակացույցը եւ օրակարգը, պատշաճ կերպով տեղադրվել են Ազգային ժողովի կայքում: Հանձնաժողովների նիստերի արձանագրությունները տեղադրվել են առցանց: Իշխանությունները նշում են, որ նոր Ազգային ժողովը մշտապես կազմակերպում է խորհրդարանական լսումներ, մասնավորապես՝ նախքան օրենսդրական նախագծերում փոփոխություններ

² <https://www.twipu.com/OxYGenarm>

³ Այս հարթակում անցկացվել են ավելի քան 5 բաց հանրային քննարկումներ եւ բազմաթիվ աշխատանքային հանդիպումներ քաղաքական կյանքին կանանց մասնակցության, «Կուսակցությունների մասին» օրենքի եւ Ընտրական օրենսգրքի փոփոխությունների, ինչպես նաեւ այլ թեմաներով:

կատարելը: Իշխանությունները հայտնում են, որ 2019 թվականի գարնանը տեղի են ունեցել երկու խորհրդարանական լսումներ (մեկը՝ Հարկային օրենսգրքի նախագծի վերաբերյալ, իսկ մյուսը՝ Հայաստանի համար համընդհանուր պարբերական դիտարկման հանձնարարականների կատարման վերաբերյալ): Իշխանությունները նաեւ նշում են, որ 2019 թվականի մայիս-հունիս ամիսներին տեղի են ունեցել եւս երեք խորհրդարանական լսումներ՝ անցումային արդարադատության թեմայով խորհրդարանական լսում՝ հրավիրված ԱԺ խոսնակի կողմից, տնտեսական հարցերի թեմայով խորհրդարանական լսում՝ հրավիրված ընդդիմության կողմից, Ընտրական օրենսգրքում եւ կուսակցությունների մասին օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու թեմայով խորհրդարանական լսում՝ հրավիրված Պետական-իրավական հարցերի հանձնաժողովի կողմից: Եվ, վերջապես, 2019 թվականի մայիսից տեղի են ունեցել խորհրդարանական ընդլայնված ութ լսումներ (յուրաքանչյուրում՝ առնվազն 50 մասնակից) եւ 12 բազմաշահառու քննարկումներ:

11. ԳՐԵԿՈՒ-ի կողմից հաշվի են առնվում տրամադրված տեղեկությունները: ԳՐԵԿՈՒ-ն հանձնարարականի առաջին մասի առնչությամբ նշում է, որ Կառավարությունն ընդունել է հանրային խորհրդակցությունների նոր ընթացակարգեր, որոնցով երկարացվում է առցանց քննարկումների նվազագույն ժամկետը եւ Արդարադատության նախարարությանը վերապահվում հանրային քննարկումների գործելակերպերի նկատմամբ մոնիթորինգի իրականացումը: Այնուամենայնիվ, ԳՐԵԿՈՒ-ն նշում է, որ օրենքների նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների գործելակերպը, ըստ էության, հետետողական չէ: Օրինակ՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որն ընդունվել է 2019 թվականի հունիսի 25-ին՝ առաջին ընթերցմամբ, չի ներկայացվել հանրային քննարկման, չի ենթարկվել փորձագիտական քննության եւ չի հրապարակվել www.e-draft.am կայքում⁴: Իշխանությունները

⁴ <https://armla.am/en/4411.html>

կարծում են, որ դա խորհրդարանական նախաձեռնության բացառիկ դեպք էր, որի համար պարտադիր խորհրդակցությունների անհրաժեշտություն չի եղել: Ավելին, նրանք նշում են, որ տվյալ օրենքի նախագիծն Ազգային ժողովի կայքում հրապարակվելու միջոցով դրվել է քննարկման մինչև երկրորդ ընթերցումը: Իշխանությունները հավելում են, որ Կառավարությունը մշակել է այս օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծ, որը դրվել է հանրային քննարկման եւ հրապարակվել [«www.e-draft.am»](http://www.e-draft.am) կայքում: Համապատասխան խորհրդարանական քննարկումները հեռարձակվել են առցանց: Եվ, ի վերջո, իշխանությունները տեղեկացրել են, որ նախագիծն արդեն ներկայացվել է Խորհրդարան եւ հանրության համար հասանելի է Խորհրդարանի կայքում: Բացի այդ, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ չնայած որոշումների ընդունման արագացված ընթացակարգի կիրառման դեպքերը նվազել են, սակայն այն շարունակել է կիրառվել նոր Խորհրդարան ներկայացված օրենքների նախագծերի 15 տոկոսի դեպքում: ԳՐԵԿՈ-ն ընդգծում է, որ օրենքների ընդունման արագացված ընթացակարգերը պետք է կիրառվեն միայն հստակ սահմանված բացառիկ դեպքերում: Թեեւ, ինչպես երեւում է, իրավաստեղծ գործընթացում հանրության ներգրավվածության մակարդակը վերջերս աճել է, ԳՐԵԿՈ-ն կոչ է անում իշխանություններին շարունակել իրենց ջանքերը, որպեսզի հնարավոր լինի կանոնավոր կերպով ապահովել պատշաճ ժամկետների գործնականում պահպանումը՝ ապահովելու համար բովանդակալից հանրային խորհրդակցություններ եւ խորհրդարանական բանավեճեր, ինչպես նաեւ այդ նպատակով տրամադրել ապացույցներ: ԳՐԵԿՈ-ն նաեւ նշում է, որ նախատեսվում է Ազգային ժողովի կայքը կատարելագործել եւ այն դարձնել ավելի մատչելի: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

12. Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ մասին, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ Ազգային ժողովն ակնհայտորեն ապահովել է հանձնաժողովների նիստերի թափանցիկության բարձր մակարդակ: Խորհրդարանական լսումները նույնպես կանոնավոր կերպով են կազմակերպվել: Այս մասն [ամբողջությամբ] կատարվել է:

13. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ i հանձնարարականը կատարվել է մասամբ:

Հանձնարարական ii.

14. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է՝ i) ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք եւ այն հեշտ հասանելի դարձնել հանրության համար, որով հստակ ուղղորդում կապահովվի շահերի բախման եւ հարակից ոլորտներին, մասնավորապես՝ նվերների եւ այլ առավելությունների ընդունմանը, անհամատեղելիության դեպքերին եւ լրացուցիչ գործունեությանը, ֆինանսական շահերին, տեղեկատվության եւ պետական ռեսուրսների ոչ իրավաչափ օգտագործմանը եւ երրորդ կողմերի, օրինակ՝ լրբբիստների հետ շփումներին առնչվող հարցերում, ii) այն լրացնել դրա իրականացման համար անհրաժեշտ գործնական միջոցներով, օրինակ՝ մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն եւ իրազեկվածության մակարդակի բարձրացում:*

15. Հարկ է նշել, որ համաձայն Պարտավորությունների կատարման գեկույցի, այս հանձնարարականը կատարվել է մասամբ: Իշխանությունները հղում են կատարել մի շարք իրավական ակտերի, որոնցով կարգավորվում են պատգամավորների բարեվարքությանն առնչվող հարցեր: Ողջունելով «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի (ՊԳԵՕ) ընդունման փաստը, որով կարգավորվում են էթիկայի ընդհանուր սկզբունքները, անհամատեղելիության, լրացուցիչ գործունեության եւ շահերի բախման հետ կապված հարցերը, ԳՐԵԿՈ-ն հարկ է համարում նշել, որ այն չի պարունակում նվերների [ընդունման] վերաբերյալ դրույթներ կամ մանրամասն ներկայացված որոշակի սահմանափակումներ: ԳՐԵԿՈ-ն շեշտել է, որ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է ունենալ վարքագծի կանոնագիրք, որով մեկ միասնական փաստաթղթում կներկայացվի գոյություն ունեցող չափանիշների համապարփակ ամփոփում՝ դրանց կիրառման վերաբերյալ ուղղորդմամբ: Թեեւ որոշ միջոցներ ձեռնարկվել են, որոնք, *ի թիվս այլնի*, ներառում են նաեւ պատգամավորների

էթիկայի կանոնների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, պետք է իրականացվեն նաեւ մասնագիտական վերապատրաստում եւ խորհրդատվություն:

16. Իշխանությունները հանձնարարականի (i) մասի առնչությամբ պնդում են, որ ՊԳԵՕ-ն իրականում պատգամավորների համար վարքագծի կանոնագիրք է, քանի որ այն սպառիչ կերպով կարգավորում է բարեվարքությանն առնչվող հարցերը: Բացի այդ, 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքով կարգավորվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, այդ թվում՝ պատգամավորների կողմից նվերների ընդունման, կողմնակի գործունեությամբ զբաղվելու անհամատեղելիության եւ սահմանափակումների հետ կապված հարցերը (29-32-րդ հոդվածներ): Մասնավորապես այդ օրենքով նախատեսվում են նվերների [ընդունման] արգելքի սկզբունքը եւ ընդունելի նվերների շեմը, ինչպես նաեւ նվերների հաշվառման մեխանիզմը:

17. Ինչ վերաբերում է հանձնարարականի (ii) մասին, իշխանությունները հայտնում են, որ պատգամավորների համար էթիկայի կանոնների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացմանն ու դրանց բովանդակության մեկնաբանմանն ուղղված միջոցառումները ձեռնարկվել են «Աջակցություն Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովին՝ խորհրդարանական վերահսկողությունը եւ ընտրողների հետ հաղորդակցությունը բարելավելու նպատակով» ծրագրի շրջանակներում: Համանման միջոցառումներ են նախատեսվում մեկ այլ ծրագրի շրջանակներում, որն ուղղված է Ազգային ժողովի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը: 2019 թվականի փետրվար-մարտ ամիսներին պատգամավորներն անցել են էթիկայի եւ վարքագծի նորմերի վերաբերյալ վերապատրաստում: Ավելին, բոլոր պատգամավորներին բաժանվել է խորհրդարանական տեխնիկական աջակցության ծրագրի⁵ շրջանակներում մշակված՝ խորհրդարանական էթիկայի եւ վարքագծի կանոնների վերաբերյալ ուղեցույց:

⁵ ՄԹ կողմից ֆինանսավորված՝ «Աջակցություն Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովին՝ խորհրդարանական վերահսկողությունը եւ ընտրողների հետ հաղորդակցությունը բարելավելու նպատակով» ծրագիր:

18. ԳՐԵԿՈՒ-ի կողմից հաշվի են առնվում տրամադրված տեղեկությունները: Հանձնարարականի առաջին մասի առնչությամբ ԳՐԵԿՈՒ-ն հիշեցնում է, որ պատգամավորների համար նախատեսված՝ շահերի բախման եւ բարեվարքությանն առնչվող հարցերի ամբողջական շրջանակի մասին համապատասխան ուղղորդում պարունակող վարքագծի կանոնագիրք դեռեւս առկա չէ: Հանձնարարականի երկրորդ մասի առնչությամբ ԳՐԵԿՈՒ-ն նշում է, որ որոշ միջոցներ (օրինակ՝ վերապատրաստումներ) են ձեռնարկվել՝ պատգամավորների շրջանում էթիկայի կանոնների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ, սակայն կանոնավոր մասնագիտական վերապատրաստում եւ խորհրդատվություն դեռեւս չի իրականացվել:

19. ԳՐԵԿՈՒ-ն եզրակացնում է, որ ii հանձնարարականը կատարվել է մասամբ:

Հանձնարարական iii.

20. *ԳՐԵԿՈՒ-ն առաջարկել է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ կանխելու առեւտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնող պարգամավորների նկատմամբ կիրառվող եւ նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները:*

21. Հարկ է նշել, որ համաձայն Պարտավորությունների կատարման զեկույցի, այս հանձնարարականը կատարվել է մասամբ: Հանձնարարականը վերաբերում էր Սահմանադրությունում, «Հանրային ծառայության մասին» օրենքում, ՊԳԵՕ-ում եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում ներառված՝ կողմնակի գործունեությամբ զբաղվելու արգելքի վերաբերյալ գործող օրենսդրության գործնական կիրառմանը:

22. Իշխանությունները վերստին նշում են, որ ՊԳԵՕ-ով եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով կարգավորվում են պատգամավորների համար կողմնակի գործունեությամբ զբաղվելու անհամատեղելիության պահանջները եւ սահմանափակումները: Ավելին, իշխանությունները հաստատում են, որ կանոնները, որոնք արգելում են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել, գործնականում արդյունավետորեն կիրառվում են: Նրանք անդրադարձել են մի դեպքի, երբ Ազգային ժողովը բողոք է ստացել այն մասին, որ պատգամավորներից մեկը ենթադրաբար զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ: Այս գործով վարույթը կասեցվել է, քանի որ Հատուկ քննչական ծառայությունը համանման գործով քրեական քննություն է իրականացնելիս եղել: Այդ վերջին դեպքում Քննչական կոմիտեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ բավարար ապացույցներ չի գտել, սակայն զանգվածային լրատվամիջոցներում լայնածավալ լուսաբանման արդյունքում այդ հարցի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը բարձրացել է: Իշխանությունները վճռական են լուծելու այս խնդիրը, որը, նրանց կարծիքով, գործող Ազգային ժողովում այլեւս այդքան մասշտաբային չէ: Նոր հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար անհամատեղելիության պահանջների վերանայում, մասնավորապես՝ նախատեսելով առետրային կազմակերպություններում կառավարման կամ մասնակցության [գործառույթի] փոխանցում հանրային պաշտոն զբաղեցնող անձանցից ֆինանսական շուկայի մասնագիտացված սուբյեկտներին:

23. ԳՐԵԿՈՒՆ նշում է, որ իշխանությունները մատնանշում են քննության փուլում գտնվող երկու առանձին գործեր, որոնք, կարծես, առնչվում են պատգամավորների կողմից կողմնակի գործունեության արգելքի շրջանցմանը, ինչը Գնահատման գեկույցում բնորոշվել է որպես «կառուցվածքային» խնդիր: Թեեւ հարցի վերաբերյալ հանրային իրազեկվածությունը հնարավոր է՝ հանգեցրել է ավելի

վճռական ընդհանուր կանխարգելիչ միջոցների կիրառման, այդ թվում՝ բոլոր նորընտիր պատգամավորների համար բարեվարքության վերաբերյալ մասնագիտական վերապատրաստման որոշ դասընթացների անցկացման, սակայն խնդիրը լուծելու եւ շոշափելի արդյունքների հասնելու նպատակով անհրաժեշտ է գործադրել համակարգային ավելի մեծ ջանքեր:

24. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ iii հանձնարարականը դեռեւս մնում է մասամբ կատարված:

Հանձնարարական iv.

25. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է պատգամավորների կողմից էթիկայի եւ վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգը զգալիորեն ամրապնդել՝ ապահովելու համար՝ i) էթիկայի կանոնների եւ անհամատեղելիության դեպքերի ու լրացուցիչ գործունեության, շահերի բախման եւ նվերների ընդունման վերաբերյալ կանոնների անկախ, շարունակական եւ նախաձեռնողական վերահսկողությունը, ii) համարժեք պատասխանատվության ենթարկելու միջոցով նորմերի կատարումը:*

26. Հարկ է նշել, որ համաձայն Պարտավորությունների կատարման զեկույցի, այս հանձնարարականը կատարվել է մասամբ: Ազգային ժողովի էթիկայի *ժամանակավոր* հանձնաժողովն իրավասու էր էթիկայի կանոնների եւ պատգամավորների *իրավիճակային* շահերի բախման հետ կապված հարցերով: Ակնկալվում էր Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի հիման վրա ստեղծել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որը պետք է զբաղվեր պատգամավորների անհամատեղելիության [պահանջների], նվերների [ընդունման] եւ գույքի հայտարարագրման հարցերով: Հանձնարարականի առաջին մասը մասամբ կատարվել է: Հայաստանի կողմից ձեռնարկված օրենսդրական միջոցառումները, օրինակ՝ ապօրինի հարստացման քրեականացումը, գույքի վերաբերյալ հայտարարագրեր ներկայացնելու հետ

կապված խախտումների համար վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը, ազդարարների ինստիտուտը, ինչպես նաև Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի գործող հանձնաժողովին վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորությամբ օժտելը համապատասխանում են հանձնարարականի երկրորդ մասի պահանջներին:

27. Իշխանությունները հիշեցնում են, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որը ստեղծվում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի գործող հանձնաժողովի հիման վրա, իրավասու կլինի պատգամավորների (ինչպես նաև այլ պաշտոնատար անձանց, ինչպիսիք են դատավորները կամ դատախազները) գույքի հայտարարագրերը ստուգելու, էթիկայի համապատասխան հանձնաժողովների (այդ թվում՝ Ազգային ժողովի հանձնաժողովի) եզրակացությունները վերանայելու եւ դրանց աշխատանքին աջակցելու համար: Նոր Ազգային ժողովը վերջերս ընդունել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ որպես իրապես անկախ վերահսկիչ մեխանիզմի, ստեղծման մասին օրենք: Նոր օրենքի հիման վրա Հանձնաժողովի անդամներն Ազգային ժողովում ընտրվել են ձայների պարզ մեծամասնությամբ:

28. Իշխանությունները նաև հայտնում են, որ ապօրինի հարստացումը քրեականացնող եւ ազդարարների պաշտպանության ինստիտուտը ներդնող իրավական դրույթները հաջող ներդրվել եւ արդյունավետորեն կիրառվում են: Հաշվետու ժամանակահատվածում հարուցվել է ապօրինի հարստացման գործով 5 դեպք: Ավելին, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը պատգամավորների նկատմամբ ֆինանսական բացահայտման կանոնների ենթադրյալ խախտումների կապակցությամբ հարուցել է վարչական վարույթներ (2018 թվականին այդպիսի վարույթներ հարուցվել են 9 պատգամավորի նկատմամբ, իսկ 2019 թվականին՝ 26 պատգամավորի նկատմամբ):

29. ԳՐԵԿՈ-ի կողմից հաշվի են առնվում տրամադրված տեղեկությունները: Ազգային ժողովի էթիկայի *ժամանակավոր* հանձնաժողովը շարունակում է իրավասու լինել էթիկայի կանոնների եւ պատգամավորների *իրավիճակային*

շահերի բախման հետ կապված հարցերի առնչությամբ: Էթիկայի հանձնաժողովը պատգամավորների շահերի բախման եւ անհամատեղելիության պահանջների հետ կապված հարցերում, ըստ ամենայնի, բավականաչափ ակտիվ չէ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ), որն ակնկալվում է, որ պետք է վերահսկի ֆինանսական բացահայտումները, հենց նոր է ստեղծվել:

30. Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ մասին, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ ձեռնարկված միջոցները, կարծես թե, ընթանում են սույն հանձնարարականի պահանջներին համահունչ:

31. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ iv հանձնարարականը դեռեւս մնում է մասամբ կատարված:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Առաջարկություն vi.

32. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է վերացնել Դատարանների նախագահների խորհրդի կողմից ժամանակավորապես գործերը դատավորների միջեւ առանց նրանց համաձայնության վերաբաշխելու հնարավորությունը՝ դատավորների (դատարանների) համար հավասար աշխատանքային ծանրաբեռնվածություն կամ դատարանում դատավորների թվի պակասը լրացնելու նպատակով:*

33. Հարկ է նշել, որ համաձայն Պարտավորությունների կատարման զեկույցի, այս հանձնարարականը մասամբ է կատարվել: ԳՐԵԿՈ-ն ողջունում է սահմանադրական այն փոփոխությունը, որով Բարձրագույն դատական խորհրդին տրվում է դատավորների տեղափոխման հարցում որոշում կայացնելու իրավասություն: Դատական օրենսգրքի նախագծում այդ նոր իրավասությունը սույն հանձնարարականի իմաստով մանրամասն ներկայացվել է, որը, սակայն, տվյալ պահին [հաշվետու ժամանակաշրջանում] Ազգային ժողովի կողմից ընդունված չի եղել:

34. Իշխանություններն այժմ հայտնում են, որ 2018 թվականի փետրվարի 7-ին Ազգային ժողովն ընդունել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի մասին» սահմանադրական օրենքը: Նոր Դատական օրենսգրքով նախատեսում է Բարձրագույն դատական խորհրդին տալ դատավորներին [այլ դատարան] գործուղելու հարցը լուծելու իրավասություն: Նման գործուղումները հնարավոր են միայն շահագրգիռ դատավորների համաձայնության դեպքում եւ միայն մինչեւ մեկ տարի ժամկետով: Նույն դատավորը չի կարող կրկին տեղափոխվել նախորդ տեղափոխումից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

35. ԳՐԵԿՈ-ն ողջունում է օրենսդրության այս փոփոխությունը, որը համապատասխանում է սույն հանձնարարականի պահանջներին: Այժմ Բարձրագույն դատական խորհուրդն է լուծում դատավորների տեղափոխման եւ գործուղման հարցերը՝ վերջիններիս համաձայնությամբ:

36. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ vi հանձնարարականը բավարար չափով կատարվել է:

Հանձնարարական vii.

37. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է բարեփոխել դատավորների պաշտոնների համալրման, առաջխաղացման եւ պաշտոնից ազատման ընթացակարգերը, այդ թվում՝ i) ամրապնդելով այդ ընթացակարգերում դատական իշխանության դերը եւ նվազեցնելով Հանրապետության նախագահի դերը եւ պահանջելով նրանից փալ իր որոշումների գրավոր հիմնավորումները, եւ ii) ապահովելով այդ ընթացակարգերի ժամանակ ընդունված ցանկացած որոշման դատական կարգով բողոքարկման հնարավորությունը:*

38. Հարկ է նշել, որ համաձայն Պարտավորությունների կատարման զեկույցի, այս հանձնարարականը կատարվել է մասամբ: ԳՐԵԿՈ-ն ողջունում է այն փաստը, որ Բարձրագույն դատական խորհուրդն է պատասխանատու

դատավորների թեկնածուների ցուցակները կազմելու եւ առաջարկները հանրապետության նախագահին ներկայացնելու համար: ԳՐԵԿՈ-ն նաեւ գնահատել է այն փաստը, որ նախագահից պահանջվում է հիմնավորել նշանակումների մերժումները, եւ որ Բարձրագույն դատական խորհուրդը կարող է չեղյալ համարել նախագահի առարկությունը: Այսպիսով, հանձնարարականի առաջին մասը կատարվել է: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ թեեւ նշանակման կամ պաշտոնից ազատման մասին որոշումների սահմանադրականության հարցը կարող է վիճարկվել Սահմանադրական դատարանում, գործերի ըստ էության բողոքարկմանն ուղղված իրավական պաշտպանության միջոց առկա չէ: Դատական օրենսգրքի նախագծով նախատեսվում է Վարչական դատարան բողոքարկելու հնարավորություն, սակայն այն Ազգային ժողովում դեռեւս գտնվում է քննարկման փուլում:

39. Իշխանություններն այժմ հայտնում են, որ Ազգային ժողովի կողմից 2018 թվականի փետրվարին ընդունված նոր Դատական օրենսգիրքը հնարավորություն է տալիս Բարձրագույն դատական խորհրդի Դատական դեպարտամենտի որոշումները բողոքարկել, երբ այն հրաժարվում է ընդունել հայտը. այն կարող է բողոքարկվել Վարչական դատարան⁶: Նման բողոք կարող է ներկայացվել երեք աշխատանքային օրվա ընթացքում, եւ այն պետք է քննվի տասն աշխատանքային օրվա ընթացքում: Նման դեպքերում բողոք ներկայացրած հավակնորդ դատավորը կարող է մասնակցել որակավորման ստուգման հաջորդ փուլերին: Իշխանությունները նշում են, որ դատավորների նշանակման վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումները բողոքարկելու իրավունքը գործնականում արդյունավետորեն կիրառվում է: Իշխանությունները նաեւ ավելացնում են, որ դատավորին առաջխաղացման ցուցակում չընդգրկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումները նույնպես կարող են բողոքարկվել Վարչական դատարան:

⁶ Համապատասխան իրավական դրույթներն ամրագրվում են նաեւ Սահմանադրությամբ (61-րդ հոդվածի 1-ին մաս), որով նախատեսվում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, եւ Վարչական դատավարության օրենսգրքով (3-րդ հոդված), որով սահմանվում են Վարչական դատարան դիմելու հիմքերը:

40. Ավելին, իշխանությունները հայտնում են, որ Դատական օրենսգրքի փոփոխությունների նախագիծը նախատեսում է որակավորման գրավոր քննության արդյունքների բողոքարկումը հատուկ ստեղծված՝ Բողոքարկման հանձնաժողովին, իսկ դրանից հետո՝ դատական մարմինն: Փոփոխությունների նախագիծը բողոքարկման նոր մեխանիզմ է նախատեսում նաեւ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների լիազորությունների դադարեցման մասին որոշումների վերաբերյալ: Սահմանափակվելով, այնուամենայնիվ, միայն նոր հանգամանքներով: Իշխանություններն ընդունում են այս վերջին մեխանիզմի ունեցած սահմանափակումները եւ նշում, որ դրանց հաղթահարումը կպահանջի սահմանադրական փոփոխություններ:

41. Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ՝ կատարման փուլում գտնվող մասին, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ նոր Դատական օրենսգրքի ընդունմամբ որակավորման ստուգման կամ առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու հայտի ընդունումը մերժելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումները կարող են բողոքարկվել Վարչական դատարան: Այնուամենայնիվ, պարզվում է, որ ներկայումս դատավորների լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումները բողոքարկելու հնարավորություն չկա: ԳՐԵԿՈ-ն նշում է, որ նախատեսվում են Դատական օրենսգրքի հետագա փոփոխություններ, որոնցով, *inter alia*, նախատեսվում է որակավորման գրավոր քննությունները վիճարկել նախ Բողոքարկման հանձնաժողովում (որպես զտիչ), այնուհետեւ՝ դատարանում: Սա տանում է ճիշտ ուղղությամբ: Պարզվում է նաեւ, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական հարցերի վերաբերյալ կայացրած որոշումները կարող են վիճարկվել, բայց այդ մեխանիզմը դժվար թե կարողանա համարվել բողոքարկման պատշաճ մեխանիզմ, այլ, ավելի շուտ՝ ԲԴԽ-ի կողմից գործի վերաբացման հնարավորություն: Սա գոհացուցիչ չէ: ԳՐԵԿՈ-ն ընդգծում է, որ բողոքարկման մեխանիզմներ պետք է նախատեսվեն պաշտոնի նշանակման, առաջխաղացման եւ լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումների համար, ինչպես պահանջվում է առաջարկությամբ:

42. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ vii հանձնարարականը մասամբ է կատարվել:

Առաջարկություն viii.

43. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է՝ i) վերանայել դատավորների նկատմամբ հարուցվող կարգապահական վարույթում Արդարադատության նախարարության դերակատարությունը, ii) ներդնել համապատասխան երաշխիքներ՝ ապահովելու համար, որ կարգապահական վարույթը չօգտագործվի որպես ներգործություն կամ դատավորների նկատմամբ հաշվեհարդար իրականացնելու միջոց, ներառյալ՝ դատավորների համար կարգապահական որոշումները դատարան բողոքարկելու հնարավորությունը:*

44. Հարկ է նշել, որ, համաձայն Պարտավորությունների կատարման զեկույցի, այս հանձնարարականը կատարվել է մասամբ: Առաջին մասի առնչությամբ իշխանությունները հայտնում են, որ Արդարադատության նախարարի՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը պահպանվել է: ԳՐԵԿՈ-ն շեշտել է, որ գործադիր իշխանության մաս կազմող Արդարադատության նախարարի ներգրավվածությունը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու գործում կարող է համարվել դատական անկախության [սկզբունքի] հետ ոչ ամբողջությամբ համատեղելի: Ազգային ժողովում քննարկման փուլում գտնվող Դատական օրենսգրքի նախագծով նախատեսված է որոշ սահմանափակումներով պահպանել նախարարի այս լիազորությունը: Այնուամենայնիվ, այդ պահին այն միայն նախագիծ էր: Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ մասին, ԳՐԵԿՈ-ն ողջունել է Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով որոշում կայացնելու մասով նոր իրավասությունը: ԳՐԵԿՈ-ն նաեւ բարձր է գնահատել անհարկի ճնշումների դեմ լրացուցիչ երաշխիքները, ինչպիսիք են դատավորների ֆունկցիոնալ անձեռնմխելիությունը եւ այլն: Այնուամենայնիվ, ԳՐԵԿՈ-ն շարունակում է

մտահոգված լինել այն փաստով, որ դատարան ներկայացված՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը հնարավոր չէ բողոքարկել, բացառությամբ, եթե հարցը չի վերաբերում դրա սահմանադրականությանը: Հանձնարարականի այս մասը հետեւաբար մասամբ է կատարվել:

45. Իշխանություններն այժմ հանձնարարականի (i) մասի առնչությամբ հայտնում են, որ փոխվել է դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու կարգը, սակայն Արդարադատության նախարարը դեռեւս ունի կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն (Օրենսգրքի՝ դատավորի կարգապահական պատասխանատվության վերաբերյալ 19-րդ գլուխ): Ավելին, նրանք հաստատում են, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող մարմինը, ներառյալ՝ Արդարադատության նախարարը, իրավունք ունի դատարանում ծանոթանալու ցանկացած քրեական, քաղաքացիական կամ ցանկացած այլ գործի նյութերին, որոնց վերաբերյալ դեռեւս չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ՝ «չմիջամտելով արդարադատության իրականացման գործընթացին» (Օրենսգրքի 147-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ): Այնուամենայնիվ, այդ դեպքերում նրանք բացատրում են, որ կարգապահական վարույթը կարող է հարուցվել դատական վարույթի ավարտից եւ դատարանի որոշումից ընդամենը վեց ամիս անց: Իշխանությունները շարունակում են հավատարիմ մնալ Արդարադատության նախարարի՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը վերացնելու նախաձեռնությանը, [որը կիրականացվի] այն բանից հետո, երբ Դատական օրենսգրքի նոր փոփոխություններով նախատեսված՝ Դատավորների [ընդհանուր] ժողովի նոր՝ էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովը (ԷԿՀ) արդյունավետորեն գործի, ինչպես առաջարկել է Վենետիկի հանձնաժողովը:

46. Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ մասին, իշխանությունները հայտնում են, որ ներկայումս, համաձայն Սահմանադրության, Բարձրագույն դատական խորհուրդն է այն մարմինը, որն իրավասու է լուծել դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ

կիրառելու հարցը: Խորհուրդը գործում է որպես դատարան, եւ դրա որոշումները, որպես այդպիսին, կարող են բողոքարկվել Վճռաբեկ դատարան: Այնուամենայնիվ, այն ունի իրավազորությունների սահմանափակ շրջանակ: Իշխանություններն ընդգծում են, որ Դատական եւ իրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսվում են սահմանադրական բարեփոխումներ, որոնցով նախատեսվում է դատավորների նկատմամբ կայացված կարգապահական որոշումները բողոքարկելու նպատակով ստեղծել արդյունավետ բողոքարկման մեխանիզմ: Միեւնույն ժամանակ Դատական օրենսգրքի փոփոխություններով նախատեսվում է ներդնել ժամանակավոր բողոքարկման մեխանիզմ՝ գործերի ըստ էության քննության առնչությամբ:

47. ԳՐԵԿՈ-ի կողմից հաշվի է առնվում տրամադրված տեղեկությունը: Այն նշում է, որ Արդարադատության նախարարը, ինչպես նաեւ Էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովն ու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ներկայումս ունեն դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն: ԳՐԵԿՈ-ն իր ավստոսանքն է հայտնում այն առնչությամբ, որ Արդարադատության նախարարը դեռեւս ունի այդ գործառույթը, ինչպես նաեւ իրավունք՝ ստանալու տեղեկություններ այն ընթացիկ դատական գործերի նյութերի վերաբերյալ, որոնց վերաբերյալ դեռեւս չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: ԳՐԵԿՈ-ն պնդում է իր տեսակետն այն առնչությամբ, որ Արդարադատության նախարարի դերը կարգապահական վարույթներում պետք է դադարեցվի: Հետեւաբար հանձնարարականի առաջին մասը դեռեւս պետք է լուծում ստանա: Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ մասին, ԳՐԵԿՈ-ն իր ավստոսանքն է հայտնում է այն կապակցությամբ, որ ներդրված չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման պատշաճ մեխանիզմ: Դատական օրենսգրքում կատարվող փոփոխություններով նախատեսված մեխանիզմը ոչ ավելին է, քան ԲԴԽ-ի կողմից սահմանափակ հիմքերով գործի վերաբացման հնարավորություն: Այսպիսով, հանձնարարականի երկրորդ մասը դեռեւս մնում է մասամբ կատարված:

48. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է որ viii հանձնարարականը դեռեւս մնում է մասամբ կատարված:

Հանձնարարական ix.

49. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ներմուծել արդյունավետ կանոններ եւ մեխանիզմներ՝ արդարադատություն իրականացնելիս դատավորների գործունեությանն անհարկի միջամտելու դեպքերը բացահայտելու եւ այդպիսի միջամտություն իրականացնող կամ իրականացնելու փորձ կատարող դատավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

50. Հարկ է նշել, որ, համաձայն Պարտավորությունների կատարման զեկույցի, այս հանձնարարականը կատարվել է մասամբ: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ, ինչպես նախկինում, Սահմանադրությամբ սահմանվում է, որ «արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ եւ գործում է միայն Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան»: Ի լրումն, փոփոխված Սահմանադրությամբ հստակորեն արգելվում է ցանկացած անհարկի միջամտություն արդարադատության իրականացմանը (162-րդ հոդվածի 2-րդ մաս): Դատական օրենսգրքի նախագիծը պարունակում է նմանատիպ դրույթներ, եւ դրանով մանրամասն ներկայացվում են անհարկի միջամտության դեպքերի մասին հաղորդելու եւ դրանց առնչությամբ վարույթ հարուցելու ընթացակարգերը: Այնուամենայնիվ, Դատական օրենսգրքի նախագիծը Խորհրդարանում դեռեւս քննարկման փուլում է:

51. Իշխանություններն այժմ հայտնում են, որ նոր Դատական օրենսգրքով արգելվում է արդարադատություն իրականացնելու կապակցությամբ ցանկացած միջամտություն դատարանի կամ դատավորի գործունեությանը եւ դատարանների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը (7-րդ հոդված): Դատավորից ստացված բողոքի հիման վրա Բարձրագույն դատական խորհուրդը միջնորդություն է ներկայացնում այն մարմին, որն իրավասու է պատասխանատվության

ենթարկելու անհարկի միջամտության համար պատասխանատու անձանց: Իրավասու մարմինը պարտավոր է ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկացնել Խորհրդին: Բարձրագույն դատական խորհուրդը կարող է հանդես գալ ձեռնարկված միջոցառումների կամ ողջամիտ ժամկետում այդպիսի միջոցառումներ չձեռնարկելու մասին պաշտոնական հայտարարությամբ: Քրեական գործերով մինչդատական քննության փուլում եւ ոչ քրեական գործերով այլ վարույթների շրջանակներում դատավորի նկատմամբ գործողությունները պետք է կատարվեն՝ առավելագույնս ապահովելով գաղտնիություն եւ դատավորի հեղինակության ու անկախության նկատմամբ հարգանք (Օրենսգրքի 51-րդ եւ 53-րդ հոդվածներ): Դատավորը պետք է զերծ մնա մեկ այլ դատավորի կողմից արդարադատության իրականացմանը միջամտելուց եւ պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բարձրագույն դատական խորհրդին արդարադատության իրականացման հետ կապված իր գործունեությանը ցանկացած անհարկի միջամտության մասին (69-րդ հոդված): Դա չկատարելու համար սահմանվում է կարգապահական պատասխանատվություն:

52. Ի վերջո, իշխանությունները նշում են, որ Բարձրագույն դատական խորհուրդը որոշում⁷ է կայացրել, որում մանրամասն նկարագրվում է անհարկի միջամտության արգելքը, մասնավորապես՝ նշելով, որ չի թույլատրվում որեւէ միջամտություն, այդ թվում՝ հեռախոսային եւ այլ բնույթի հաղորդակցություն հանրային իշխանության ներկայացուցչի կամ դատարանի նախագահի հետ, կամ այդ առնչությամբ հրապարակային հայտարարություններ անել, ինչպես նաեւ քննության առարկա գործի առնչությամբ տեղեկատվություն ստանալու պահանջներ ներկայացնել: Իշխանությունները նշում են, որ առայժմ դատավորներից որեւէ բողոք չի արձանագրվել:

53. ԳՐԵԿՈ-ն հիշեցնում է, որ այս հանձնարարականի հիմքում եղել են այն խնդիրները, որոնց շուրջ ցածր ատյանի դատարանների դատավորները նախքան

⁷ 2018 թվականի ապրիլի 12-ի «Դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող հնարավոր դրսեւորումները կանխելու մասին» թիվ ԲԴԽ-2-Ո-3 որոշում:

որոշումներ կայացնելը երբեմն խորհրդակցում են ավելի բարձր ատյանների դատարանների դատավորների հետ՝ ելնելով այն մտավախությունից, որ վճիռն ավելի բարձր ատյանում կարող է վիճարկվել, եւ հակառակը, որ ավելի բարձր ատյանների դատարանների դատավորներն ազդեցություն են գործում ավելի ցածր ատյանի դատարանների դատավորների որոշումներ կայացնելու գործընթացի վրա: ԳՐԵԿՈ-ն նշում է, որ նոր Դատական օրենսգրքով արգելվում է միջամտել դատավորների գործունեությանը, եւ մանրամասն ներկայացվում է անհարկի միջամտության դեպքերի մասին հաղորդելու եւ դրանց ընթացք տալու ընթացակարգերը: Դրանով նաեւ կարգապահական պատասխանատվություն է նախատեսվում այն դատավորների համար, որոնք միջամտում են մյուս դատավորների կողմից արդարադատության իրականացմանը, եւ որոնք իրենց գործունեությանն անհարկի միջամտության դեպքերի մասին չեն հաղորդում: Ավելին, Բարձրագույն դատական խորհուրդն այնուհետեւ մանրամասն ներկայացրել է այդ հարցերի կարգավորումը, մասնավորապես այն, որ գործերին միջամտելը եւ քննության փուլում գտնվող գործերի վերաբերյալ տեղեկատվության պահանջներ ներկայացնելը չի թույլատրվում: Այդ գործընթացն ընթանում է ճիշտ ուղղությամբ: Այնուամենայնիվ, ԳՐԵԿՈ-ն ցանկանում է ավելին իմանալ կանոնների եւ ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումների գործնական կիրառման մասին՝ իրազեկման եւ վերապատրաստման ձեռով եւ այլն:

54. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ ix հանձնարարականը շարունակում է մնալ մասամբ կատարված:

Հանձնարարական xi.

55. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն՝ դատավորների գործունեությանն անհարկի միջամտությունը, դատական իշխանությունում շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու ուղղությամբ, ինչը ներառում է՝ i) բոլոր դատավորների համար պարբերական բնույթ կրող պարտադիր վերապատրաստումների անցկացում՝*

էթիկայի եւ վարքագծի, դատական անաչառության եւ անկախության, ինչպես նաեւ շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու վերաբերյալ, որոնք պետք է կազմակերպվեն դատական իշխանության սերտ մասնակցությամբ, եւ ii) դատական համակարգում գաղտնի խորհրդատվության տրամադրում՝ դատավորների իրազեկության մակարդակը բարձրացնելու եւ (i) մասում նշված ոլորտների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու համար:

56. Հարկ է նշել, որ այս հանձնարարականը Պարտավորությունների կատարման զեկույցում կատարվել է մասամբ: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ այդ պահին գործող Դատական օրենսգրքի դրույթներով պահանջվում էր, որ դատավորները մասնակցեն դատական թեմաներով վերապատրաստումների եւ դատավորների էթիկայի կանոնների վերաբերյալ կազմակերպվող մի շարք *իրավիճակային* վերապատրաստման միջոցառումների: Դատական օրենսգրքի նախագծով նախատեսվում է էթիկայի վերաբերյալ խորհրդատվության եւ վերապատրաստման հնարավորություններ: ԳՐԵԿՈ-ն կոչ է անում ապահովել գաղտնի խորհրդատվություն եւ բոլոր պաշտոնավարող դատավորների համար մշակել էթիկայի կանոնների, դատական անկողմնակալության, անկախության եւ նմանատիպ թեմաներով կանոնավոր եւ պարտադիր վերապատրաստման ծրագրեր: Ակնկալվել է, որ հանձնարարականի բոլոր մասերի առնչությամբ պետք է զգալիորեն ավելի շատ ջանքեր գործադրվեն եւ մշտական բնույթի միջոցառումներ ձեռնարկվեն:

57. Իշխանություններն այժմ հայտնում են, որ 2019 թվականին Արդարադատության ակադեմիայի նախնական վերապատրաստման ուսումնական ծրագրում ներառվել են դատական էթիկայի, դատավորների գնահատման, կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով դասընթացներ, որոնք արդյունավետորեն իրականացվել են (ընդհանուր՝ 61 դատավորի թեկնածուների համար): Ավելին, իշխանությունները նշում են, որ դատական էթիկայի, դատավորների գնահատման, ծառայողական քննությունների, շահերի բախման եւ կոռուպցիայի դեմ պայքարի, ինչպես նաեւ դատական համակարգի

անկախության եւ թափանցիկության վերաբերյալ դասընթացները ներառվել են 2019 թվականի տարեկան պարտադիր շարունակական վերապատրաստման ուսումնական ծրագրում եւ արդյունավետորեն իրականացվել են (ընդհանուր՝ 284 դատավորների եւ դատավորի թեկնածուների համար):

58. Ավելին, իշխանությունները նշում են, որ 2019 թվականի հոկտեմբերին ընդունված Դատական եւ իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությամբ Արդարադատության ակադեմիայի դատավորների համար էթիկայի եւ դատական համակարգի անկախության վերաբերյալ կանոնավոր վերապատրաստման դասընթացները պահպանվել են:

59. Իշխանությունները նաեւ հայտնում են, որ նոր Դատական օրենսգրքի համաձայն, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովն իրավունք ունի դատավորների կամ դատավորի թեկնածուների գրավոր պահանջների հիման վրա դատավորների վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի մեկնաբանություններ տրամադրել (66-րդ հոդված): Մինչ այժմ դատավորների կողմից որեւէ նման պահանջ չի ներկայացվել: Իշխանություններն ընդունում են, որ ԷԿՀ-ի ներկայիս մոդելը, որը համատեղում է խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու եւ Բարձրագույն դատական խորհրդում կարգապահական վարույթ հարուցելու գործառույթները, խնդրահարույց է եւ Վենետիկի հանձնաժողովի կողմից քննադատվել է դրա 2017 թվականի հոկտեմբերի եզրակացության մեջ⁸:

60. ԳՐԵԿՈ-ի կողմից հաշվի են առնվում տրամադրված տեղեկությունները: ԳՐԵԿՈ-ն գնահատում է այն փաստը, որ մասնավորապես դատավորների վարքագծի կանոնների եւ կոռուպցիայի կանխարգելման հարցերին վերաբերող մասնագիտացված դասընթացները ներառվել են դատական համակարգի կանոնավոր վերապատրաստման շրջանակներում, եւ 2019 թվականին մեծ թվով դատավորներ եւ դատավորի թեկնածուներ արդյունավետորեն մասնակցել են դասընթացներին, ինչպես նաեւ այն փաստը, որ այդ դասընթացները

⁸ [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2017\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2017)019-e)

շարունակական են լինելու: Հանձնարարականի առաջին մասին բավարար չափով անդրադարձ է կատարվել:

61. Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ մասին, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ նոր Դատական օրենսգրքով նախատեսվում է, որ էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովը դատավորների դիմումների հիման վրա պետք է տրամադրի դատական վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի մեկնաբանություններ: Սա էթիկային առնչվող հարցերում դատավորներին օգնելու նպատակով գաղտնի խորհրդատվություն չի համարվում: Ավելին, ԳՐԵԿՈ-ն շեշտում է, որ գաղտնի խորհրդատվության համակարգը ցանկալի է, որ լինի կարգապահական մարմիններից առանձին (տե՛ս Գնահատման զեկույցի 166-րդ կետը): Հանձնարարականի երկրորդ մասին դեռեւս պետք է անդրադառնալ:

62. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xi հանձնարարականը դեռեւս մնում է մասամբ կատարված:

Կոռուպցիայի կանխարգելումը դատախազների շրջանում

Հանձնարարական xiv.

63. ԳՐԵԿՈ-ն առաջարկել էր բարեփոխել դատախազների պաշտոնների համալրման եւ առաջխաղացման ընթացակարգերը, այդ թվում՝ i) բարձրացնելով Որակավորման հանձնաժողովում որոշումների ընդունման գործընթացի թափանցիկությունը, սահմանափակելով գլխավոր դատախազի հայեցողական լիազորությունները եւ պահանջելով նրանից տալ իր որոշումների գրավոր հիմնավորումները, եւ ii) թույլ տալով չընտրված թեկնածուներին բողոքարկել դատարան՝ կոնկրետ եւ ճշգրիտ իրավական դրույթների հիման վրա:

64. Հարկ է նշել, որ այս հանձնարարականը Պարտավորությունների կատարման զեկույցում կատարվել է մասամբ: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ թեկնածուն, որի դիմումը մերժվել է, կարող է այդ որոշումը բողոքարկել դատարան: ԳՐԵԿՈ-ն

նաեւ ողջունել է այն պահանջը, որ Գլխավոր դատախազը պետք է Որակավորման հանձնաժողովից դրական եզրակացությունն ստացած, սակայն վերջում առաջադրումների համար չընդունված թեկնածուների մասով իր կայացրած որոշումները հիմնավորի, եւ որ այդպիսի որոշումները կարող են բողոքարկվել: ԳՐԵԿՈ-ն ակնկալում էր լրացուցիչ միջոցառումներ Որակավորման հանձնաժողովի ընթացակարգերն ավելի թափանցիկ դարձնելու ուղղությամբ:

65. Հայաստանի իշխանություններն այժմ հայտնում են, որ գլխավոր դատախազը հաստատել է կարգադրություն, որով նախատեսվում է Որակավորման հանձնաժողովի գործունեության թափանցիկության մակարդակի բարձրացում, մասնավորապես այն, որ Հանձնաժողովի բոլոր նիստերը պետք է ձայնագրվեն, եւ անհրաժեշտության դեպքում ձայնագրությունները տրամադրվեն թեկնածուներին: Բացի այդ, Որակավորման հանձնաժողովն իր որոշումները հրապարակում է Դատախազության կայքում:

66. ԳՐԵԿՈ-ն ողջունում է Որակավորման հանձնաժողովի թափանցիկության մակարդակի բարձրացմանն ուղղված քայլերը, որոնք համապատասխանում են հանձնարարականի դեռ չկատարված պահանջին:

67. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xiv հանձնարարականը կատարվել է քավարար չափով:

Հանձնարարական xv.

68. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն՝ դատախազների գործունեությանն անհարկի միջամտությունը, ինչպես նաեւ դատախազական ծառայությունում շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու համար, ինչը ներառում է՝ i) բոլոր դատախազների համար պարբերական բնույթ կրող պարտադիր վերապատրաստումների անցկացում՝ էթիկայի եւ վարքագծի, անկողմնակալության ու անկախության, շահերի բախումը եւ կոռուպցիան*

կանխարգելելու վերաբերյալ, եւ ii) դատախազական ծառայությունում գաղտնի խորհրդատվության տրամադրում՝ (i) մասում նշված ոլորտների վերաբերյալ դատախազներին խորհրդատվություն տրամադրելու եւ նրանց իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով:

69. Հարկ է նշել, որ այս հանձնարարականը Պարտավորությունների կատարման զեկույցում կատարվել է մասամբ: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ դատախազների համար որոշ իրավիճակային վերապատրաստման դասընթացներ կազմակերպվել են, սակայն եզրակացնում է, որ բոլոր դատախազների համար էթիկայի կանոնների վերաբերյալ պարտադիր եւ կանոնավոր մասնագիտացված վերապատրաստում դեռեւս չի ներդրվել: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ դատախազների համար հատուկ խորհրդատվության տրամադրման մեխանիզմի ձեւավորման աշխատանքներն ընթացքի մեջ են, սակայն այն կարծես կարգապահական մարմիններից առանձին է: Ակնկալվում է, որ Կոռուպցիայի կանխարգելման նոր հանձնաժողովը կտրամադրի խորհրդատվություն անհամատեղելիության պահանջների եւ այլ սահմանափակումների, բայց ոչ դատախազների էթիկայի վերաբերյալ:

70. Ինչ վերաբերում է հանձնարարական (i) մասին, իշխանություններն այժմ հայտնում են, որ դատախազի վարքագծի կանոնների, ծառայողական քննությունների, կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ դասընթացները ներառվել են 2019-ին դատախազների համար նախատեսված տարեկան պարտադիր վերապատրաստման շրջանակներում եւ արդյունավետորեն անցկացվել են (ընդհանուր՝ 49 դատախազների եւ դատախազի թեկնածուների համար): Գլխավոր դատախազի տեղակալի առաջարկությամբ այդ դասընթացներն ընդգրկվել են Արդարադատության ակադեմիայի վերապատրաստման ուսումնական ծրագրում⁹: Ակնկալվում է, որ այդ դասընթացները պետք է շարունակվեն 2020 թվականին¹⁰:

⁹ Գլխավոր դատախազի տեղակալի 2018 թվականի փետրվարի 28-ի Արդարադատության ակադեմիային ուղղված նամակը:

¹⁰ <http://www.iusticeacademv.am/#1558>

71. Ինչ վերաբերում է հանձնարարականի (ii) մասին, իշխանությունները նշում են, որ Գլխավոր դատախազությունում ստեղծվել է էթիկայի հարցերով խորհրդատվության եւ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով¹¹: 2019 թվականի օգոստոսին հնարավոր կարգապահական զանցանքի առնչությամբ մի դեպքով ներկայացվել է խորհրդատվություն տրամադրելու մասին դիմում: Տվյալ դեպքում Հանձնաժողովը խորհրդակցել է Եվրոպայի դատախազների խորհրդակցական խորհրդի հետ եւ որոշել, որ կարգապահական կանոնների խախտում չի եղել:

72. ԳՐԵԿՈ-ն ողջունում է էթիկայի եւ կոռուպցիայի կանխարգելման եւ այլ թեմաներով դատախազների համար 2019 թվականին անցկացված նոր պարտադիր վերապատրաստման դասընթացը եւ գնահատում է, որ նման վերապատրաստման դասընթացներ ակնկալվում են նաեւ 2020 թվականին: ԳՐԵԿՈ-ն նշում է, որ դատախազների համար ստեղծվել է խորհրդատվության տրամադրման մեխանիզմ: Այնուամենայնիվ, վերջինս կարգապահական մարմիններից տարանջատված չէ: Ըստ երեւոյթին, խորհրդատվության տրամադրման մեխանիզմը նոր է սկսել գործել:

73. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xv հանձնարարականը մասամբ է կատարվել:

Բոլոր կարեգործիաների անձանց առնչությամբ

Հանձնարարական xvi.

74. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է հետագայում մշակել պատգամավորների, դատավորների եւ դատախազների կողմից նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ, որպեսզի հնարավոր լինի տալ այնպիսի հստակ սահմանումներ, որոնք կընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնափրային

¹¹ «Էթիկայի հարցերով դատախազներին խորհրդատվություն տալու նպատակով հանձնաժողովի ստեղծման եւ հանձնաժողովի կանոնակարգի մասին» գլխավոր դատախազի թիվ 15 հրամանը:

օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները, ներմուծել ստացված նվերների մասին վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմին հայտնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող հատուկ դեպքում՝ նվազեցնել գործող այն շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հայտնել նվերների մասին:

75. Հարկ է նշել, որ այս հանձնարարականը Պարտավորությունների կատարման զեկույցում չի կատարվել: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ օրենսդրությամբ («Հանրային ծառայության մասին» օրենքը եւ Դատական օրենսգիրքը) նվերների առնչությամբ ամրագրված են անորոշ դրույթներ, ինչպես եղել է Գնահատման զեկույցն ընդունելու պահին: ԳՐԵԿՈ-ն նաեւ նշել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մասով նվերների հետ կապված կարգավորումներում փոփոխություններ կատարելու նպատակով պատրաստվում է բարեփոխում կատարվել: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կոչված է վերահսկելու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների մասով սահմանափակումների եւ անհամատեղելիության պահանջների պահպանումը:

76. Իշխանություններն այժմ հայտնում են, որ 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» նոր օրենքով նախատեսվում է, որպես հիմնական կանոն, ընդհանրապես արգելել նվերների ընդունումն այն դեպքում, երբ դրանք առնչվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց (այդ թվում՝ պատգամավորների, դատավորների եւ դատախազների) պաշտոնեական պարտականությունների կատարմանը (29-րդ հոդված): Օրենքով նաեւ սահմանվում է, որ որոշակի նվերներ (հյուրասիրություն, արարողակարգային միջոցառումների ժամանակ տրված նվերներ, կրթաթոշակներ, դրամաշնորհներ եւ այլն) թույլատրվում են: Օրենքով նախատեսվում է թույլատրելի նվերների վերաբերյալ հայտնելու եւ 75 000 դրամի (մոտավորապես 144 եվրո) շեմը գերազանցող նվերները հաշվառելու պարտավորությունը¹²: Նվերների հետ կապված գործընթացի վարման եւ հաշվառման կարգը պետք է սահմանվի Կառավարության կանոնակարգով:

¹² 75 000 դրամի (մոտավորապես 144 եվրո) շեմը գերազանցող նվերները համարվում են պետական կամ համայնքային սեփականություն:

77. Իշխանությունները նաեւ ավելացնում են, որ նոր Դատական օրենսգրքով (73-րդ հոդված) արգելվում է այնպիսի նվերների ընդունումը (ներառյալ՝ ոչ նյութական օգուտները), որոնք կապված են դատավորների (եւ նրանց հետ բնակվող ընտանիքի անդամների) կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման հետ՝ որոշ բացառություններով (այդ թվում՝ հյուրասիրությունը եւ արարողակարգային միջոցառումների ժամանակ տրված նվերները, մերձավոր ազգականներից ստացված նվերները, կրթաթոշակները, դրամաշնորհները եւ այլն):

78. ԳՐԵԿՈ-ի կողմից հաշվի են առնվում տրամադրված տեղեկությունները: Այն ողջունում է «Հանրային ծառայության մասին» նոր օրենքում եւ նոր Դատական օրենսգրքում նվերների հետ կապված հարցերը կարգավորող ընդլայնված դրույթների ներառումը: Նոր օրենքների շրջանակներում, որպես հիմնական կանոն, նախատեսվում է նվերների ընդունումն արգելել: Դատական օրենսգրքով այդ արգելքը տարածվում է դատավորի ընտանիքի անդամների եւ նրա հետ բնակվող մյուս մերձավոր ազգականների նկատմամբ: Նոր կանոններով սահմանվում է, թե ինչն է համարվում թույլատրելի նվեր, ինչպես նաեւ վերջինիս մասին հայտնելու եւ այն հաշվառելու կարգը: Այնուամենայնիվ, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ օրենսդրության մեջ դեռեւս առկա են նվերի սահմանման հետ կապված մի քանի անորոշ եզրույթներ, որոնց մասին Գնահատման հաշվետվության մեջ արդեն նշվել է (226-րդ կետ), եւ որոնք հստակեցման կարիք ունեն: Ավելին, նվերների մասին հայտնելու շեմը շարունակում է բավականին բարձր մնալ: Ի վերջո, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որն արդեն ստեղծվել է, վերահսկելու է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների մասով սահմանափակումների պահպանումը:

79. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ ix հանձնարարականը մասամբ է կատարվել:

Հանձնարարական xviii.

80. ԳՐԵԿՈՒ-ն առաջարկել է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար պարզամավորների, դատավորների եւ դատախազների նկատմամբ կիրառվող՝ գույքի հայտարարագրման վերաբերյալ կանոնների արդյունավետ հսկողությունը եւ կատարման ապահովումը՝ մասնավորապես ամրապնդելով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության անկախությունը, դրան վերապահելով ներկայացված հայտարարագրերը մանրակրկիտ ստուգելու, խախտումների դեպքերն ուսումնասիրելու, վարույթ հարուցելու եւ կանոնների խախտման դեպքում արդյունավետ, համաչափ եւ փարհամոզիչ պատասխանատվության միջոցներ կիրառելու հստակ մանդատ, լիազորություն եւ բավարար ռեսուրսներ:

81. Հարկ է նշել, որ այս հանձնարարականը Պարտավորությունների կատարման զեկույցում կատարվել է մասամբ: ԳՐԵԿՈՒ-ի կողմից ուշադրության են արժանացել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումները, ինչպես օրինակ՝ ապահովելով տարբեր տվյալների բազաների, ինչպես նաեւ անհրաժեշտ ֆինանսական եւ կադրային ռեսուրսների հասանելիությունը: ԳՐԵԿՈՒ-ի կողմից հաշվի է առնվել այն, որ Հանձնաժողովը վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորություն է ստացել: Ավելին, ԳՐԵԿՈՒ-ի կողմից հաշվի է առնվել նաեւ գույքի հայտարարագրերի վերաբերյալ կարգավորումների խախտումների մասով վարչական եւ քրեական պատասխանատվության միջոցների կիրառման ներդրումը: Այնուամենայնիվ, համակարգը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովից անցում էր կատարում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, եւ դրա արդյունավետությունը պետք է գնահատվի ավելի ուշ փուլում:

82. Իշխանություններն այժմ հայտնում են, որ նախկինում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործառույթներն էին բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի ռեեստրի վարելը,

եկամուտների եւ գույքի հայտարարագրերը վերլուծելն ու հրապարակելը, շահերի բախման եւ բարձր մակարդակի էթիկայի կանոնների խախտման դեպքերը հայտնաբերելը, խախտումներն ուսումնասիրելը եւ վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելը: Իշխանություններն այնուհետեւ հայտնում են, որ պատգամավորներից, դատավորներից եւ բոլոր դատախազներից պահաջվում է հայտնել իրենց պատկանող գույքի, եկամուտների եւ շահերի մասին: Հանձնաժողովի համար ապահովվել է հասանելիությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների էլեկտրոնային տվյալների բազաներ, եւ այն կարող է պետական մարմիններից լրացուցիչ տեղեկություններ պահանջել: Իշխանությունները նաեւ հայտարարում են, որ ներկայացված հայտարարագրերի թիվը զգալիորեն աճել է. դրանք բոլորը հասանելի են առցանց: 2018 թվականին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն իրականացրել է գույքի հայտարարագրերի հետ կապված կարգավորումների խախտումների մասով 419 վարչական վարույթ (տվյալները ժամանակին չներկայացնելու, տվյալներն ուշ ներկայացնելու, կեղծ տվյալներ ներկայացնելու դեպքեր, ընթացակարգային խախտումներ եւ այլն): Հանրային պաշտոն զբաղեցնող 219 անձանց տրվել է նախազգուշացում, 68-ին՝ նշանակվել տույժ, 122 վարույթ կարճվել է, իսկ 8 վարույթ՝ կասեցվել (այդ թվում՝ 20 պատգամավոր, 4 դատավոր եւ 9 դատախազ):

83. Ավելին, իշխանությունները հայտնում են, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը 2181 հայտարարագրերի հիման վրա ուսումնասիրել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման դեպքեր: Շահերի բախում է հայտնաբերվել առեւտրային կազմակերպությունների գործունեության հետ կապ ունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով 14 % դեպքերում: 2018 թվականին հանձնաժողովն ուսումնասիրել է հնարավոր շահերի բախման վերաբերյալ 7 բողոք: Եվ վերջում, իշխանությունները հայտնում են, որ կոռուպցիայի կանխարգելման եւ հայտարարագրման պահանջներին համապատասխանության վերաբերյալ

Արդարադատության ակադեմիայում վերապատրաստում են անցել 45 դատավոր եւ 46 դատախազ, ինչպես նաեւ 9 դատավորի թեկնածու եւ 13 դատախազի թեկնածու:

84. Վերջում, իշխանությունները նշում են, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մրցութային խորհրդի անդամների ընտրության գործընթացի վերաբերյալ հակասությունների արդյունքում (այն է՝ հինգ հանձնակատարների մրցակցային ընտրություն անցկացնելը), Խորհրդարանի խոսնակն առաջարկել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ կատարել՝ Մրցութային խորհրդին ԿԿՀ-ի անդամների նշանակման գործընթացից հեռացնելու եւ Կառավարության, Խորհրդարանի իշխող կոալիցիայի եւ ընդդիմադիր խմբակցությունների, ինչպես նաեւ Բարձրագույն դատական խորհրդի կողմից թեկնածուների ուղղակի առաջադրմամբ ընտրության համակարգ ներդնելու նպատակով: Դա արվել է այդ գործընթացի հետագա հետաձգումները բացառելու նպատակով, քանի որ օրենքով պահանջվում է, որ պաշտոնատար անձինք 2020 թվականի համար իրենց գույքի հայտարարագրերը ԿԿՀ ներկայացնեն: Այդ օրենքն ընդունվել է 2019 թվականի հոկտեմբերին: ԿԿՀ-ի անդամներն արդեն առաջադրվել են: Նրանք ընտրել են հանձնաժողովի նախագահ: Միեւնույն ժամանակ Կառավարության կողմից օրենքի նախագիծ է մշակվել՝ ԿԿՀ-ի անդամների մրցութային կարգով ընտրության մեթոդը վերահաստատելու նպատակով: Այդ օրենքի նախագծի համաձայն՝ ԿԿՀ-ի առաջին կազմը նշանակվելու է Ազգային ժողովի կողմից վերոնշյալ համապատասխան մարմինների կողմից թեկնածուների ուղղակի առաջադրման միջոցով: Օրենքի նախագծով նախատեսում են նաեւ հետագա մրցութային խորհուրդների ստեղծման գործընթացը կարգավորող նոր կանոններ: Այսպիսով, նախագծի ներկայիս տարբերակի համաձայն, Խորհրդում ընդգրկվելու են Կառավարության, Խորհրդարանի, Բարձրագույն դատական խորհրդի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի եւ Փաստաբանների պալատի կողմից նշանակված

անդամներ: Առաջարկվող կազմը նպատակ ունի հավասարակշռելու ընտրական գործընթացում իշխանության բոլոր ճյուղերի մասնակցությունը եւ կանխելու մանիպուլյացիաները, որոնք տեղի են ունեցել նախորդ մրցութային խորհրդի ստեղծման գործընթացում:

85. ԳՐԵԿՈ-ի կողմից հաշվի են առնվում տրամադրված տեղեկությունները, *ի թիվս այլնի*, այն, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն ուսումնասիրել է ֆինանսական բացահայտման կանոնների խախտումների վերաբերյալ որոշակի թվով վարչական գործեր: ԳՐԵԿՈ-ն ընդգծում է, որ կոռուպցիայի կանխարգելման մարմնի լիազորությունները պետք է թույլ տան օգտվել անհրաժեշտ ֆինանսական տեղեկություններից՝ հայտարարագրերի մանրակրկիտ ուսումնասիրության համար՝ հաշվի առնելով անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը եւ համաչափությունը: Օրինակ՝ օրենքով նախատեսված դեպքերում կարող է պահանջվել բանկային գործարքների մանրամասների հասանելիություն: Ըստ երեւոյթին, Հանձնաժողովը ներկայացված հայտարարագրերի հիման վրա ուսումնասիրել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման դեպքեր: Ավելին, պարզվում է, որ կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել որոշակի թվով դատավորների եւ դատախազների համար: Այս բոլոր ներկայացված միջոցառումները ճիշտ ուղղությամբ են ընթանում:

86. Ինչ վերաբերում է այդ համակարգի ինստիտուցիոնալ կայացմանը, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ գույքի հայտարարագրերը վերահսկելու գործառույթը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին փոխանցելու գործընթացն ընթացքի մեջ է: Խորհրդարանն ընդունել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» նոր օրենք: Այդ օրենքով մրցութային խորհուրդը հեռացվում է ԿԿՀ-ի անդամների նշանակման գործընթացից, եւ ներդրվում է թեկնածուների ուղղակի առաջադրման համակարգ (մեկ թեկնածու առաջադրվում է Կառավարության կողմից, մեկը՝ Խորհրդարանի իշխող կուսակցության կողմից,

երկու թեկնածու՝ Խորհրդարանի երկու ընդդիմադիր կուսակցությունների կողմից եւ մեկ թեկնածու՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից): Այդպիսի մոդելի հետ կապված հիմնական մտահոգությունը քաղաքականացման զգալի ռիսկն է¹³: Դա հակակոռուպցիոն մարմինների համար կենսական նշանակություն ունեցող հարց է, քանի որ այդ մարմինները քաղաքական միջամտությունից եւ ազդեցությունից զերծ պահելը դրանց արդյունավետության ապահովման հիմնական սկզբունքն է: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ներկայումս առաջադրման կամ ընտրության գործընթացում ներկայացված չեն: Կառավարությունը եւ իշխող խորհրդարանական խմբակցությունը կարող են հանձնաժողովի մեծամասնությանը վերահսկել: Ըստ երեւոյթին, այդ հարցի վերաբերյալ Կառավարության կողմից նոր փոփոխություններ են մշակվում, որոնցով նախատեսվում են Խորհրդարանի կողմից ԿԿՀ-ի առաջին կազմի ուղղակի առաջադրումներ, իսկ այնուհետեւ՝ Մրցութային խորհրդի վերականգնում: Չնայած ԳՐԵԿՈ-ն հասկանում է իշխանությունների արագ գործելու վճռականությունը, սակայն իշխանություններին կոչ է անում ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անկախությունը, մասնավորապես՝ վերջինիս հավասարակշռված եւ կայուն կազմի ու թափանցիկ ընթացակարգերի միջոցով: ԳՐԵԿՈ-ն ցանկանում է շեշտել, որ այս հանձնարարականը մեծապես վերաբերում է կոռուպցիայի կանխարգելման մարմնի գործառնական անկախությանը:

87. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xviii հանձնարարականը շարունակում է մնալ մասամբ կատարված:

¹³ Տե՛ս Հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարությունը:

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

88. Համաձայն վերոնշյալի՝ ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ Չորրորդ փուլի գնահատման զեկույցում ներառված տասնութ հանձնարարականներից յոթը Հայաստանն այժմ կատարել է կամ դրանց անդրադարձել է բավարար չափով: Մնացած տասնմեկ հանձնարարականները կատարվել են մասամբ:

89. Ավելի կոնկրետ՝ v, vi, x, xii, xiii, xiv եւ xvii հանձնարարականներին բավարար չափով անդրադարձ է կատարվել, իսկ i-iv, vii-ix, xi, xv, xvi եւ xviii հանձնարարականները մասամբ են կատարվել:

90. Որոշակի սահմանափակ առաջընթաց է գրանցվել պատգամավորների մասով: Հանձնաժողովների նիստերի թափանցիկության մակարդակը բավականին բարձրացել է, սակայն ավելի մեծ առաջընթաց է ակնկալվում օրենսդրական նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների մասով, ինչպես նաեւ ակնկալվում է, որ նոր օրենսդրության ընդունման համար արագացված ընթացակարգերից օգտվելու դեպքերը կնվազեն: Պատգամավորները դեռեւս չունեն համապարփակ վարքագծի կանոնագիրք, որը կներառի բարեվարքությանն առնչվող հարցերի վերաբերյալ համապատասխան ուղղորդում: Գործնականում ավելի շատ քայլեր են անհրաժեշտ՝ պատգամավորների համապատասխանությունը ձեռնարկատիրական գործունեության մեջ ներգրավվածությունն արգելող կանոններին ապահովելու նպատակով:

91. Ինչ վերաբերում է դատավորներին, ԳՐԵԿՈ-ն ողջունում է նոր Դատական օրենսգրքի ընդունումը, որով դատավորների համար նախատեսվում են բարեվարքության մասով մի շարք երաշխիքներ. օրինակ՝ դատավորների տեղափոխումը/գործուղումը հնարավոր է միայն նրանց համաձայնությամբ: Ընդգրկվել են դատավորների գործունեությանն անհարկի միջամտությունը կանխող ընդլայնված դրույթներ, սակայն գործնականում ավելի շատ բարեփոխումների անհրաժեշտություն կա: Առաջընթաց է գրանցվել դատավորների համար պաշտոնների համալրման գործընթացում որոշակի

որոշումներ բողոքարկելու հնարավորություն ընձեռելու ուղղությամբ, սակայն կարգապահական գործերով համապատասխան բողոքարկման մեխանիզմ դեռևս չի ներդրվել: ԳՐԵԿՈ-ն գնահատում է բարեվարքությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրականացվող դատավորների մասնագիտական վերապատրաստման դասընթացները: Անհրաժեշտ է տարանջատել գաղտնի խորհրդատվության տրամադրման մեխանիզմը կարգապահական մեխանիզմներից:

92. Ինչ վերաբերում է դատախազներին, ԳՐԵԿՈ-ն գնահատում է դատախազների ընտրության գործընթացի թափանցիկության բարձր մակարդակը եւ ողջունում էթիկայի կանոնների վերաբերյալ պարտադիր մասնագիտացված վերապատրաստման դասընթացների կազմակերպումը: Անհրաժեշտ է դատախազներին տրամադրվող գաղտնի խորհրդատվությունը կարգապահական մեխանիզմներից տարանջատել:

93. Եվ վերջում, ԳՐԵԿՈ-ն բարձր է գնահատում նվերներ ընդունելու հարցում ընդլայնված կանոնները, սակայն կարծում է, որ դրանք կարելի է ավելի հստակեցնել եւ պատշաճ կերպով վերահսկել: ԳՐԵԿՈ-ն հետեւում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծման գործընթացին, որի նպատակը գույքի հայտարարագրման արդյունավետ վերահսկողությունը եւ կանոնների կիրարկումն ապահովելն է: Այս առումով, այդ կառույցի անկախությունը քաղաքական ազդեցությունից եւ ճնշումներից առանցքային նշանակություն ունի եւ կախված է վերջինիս հավասարակշռված եւ կայուն կազմից ու թափանցիկ ընթացակարգերից:

94. Հաշվի առնելով վերը նշվածը, ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ հանձնարարականների կատարման ներկայիս ցածր մակարդակը Կանոնակարգի 31-րդ հոդվածի 8.3 կետի իմաստով «ընդհանուր առմամբ անբավարար է»: Հետեւաբար ԳՐԵԿՈ-ն որոշում է կիրառել 32-րդ հոդվածի 2-րդ կետի i ենթակետը, որը վերաբերում է փոխադարձ գնահատման զեկույցում ներառված հանձնարարականների կատարումը չապահովող անդամներին, եւ խնդրում է

Հայաստանի պատվիրակության ղեկավարին չկատարված (այն է՝ i-iv, vii-ix, xi, xv, xvi եւ xviii) հանձնարարականների իրականացման գործընթացում գրանցած առաջընթացի վերաբերյալ ներկայացնել զեկույց հնարավորինս շուտ, սակայն ոչ ուշ, քան 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

95. Ի վերջո, ԳՐԵԿՈ-ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին հնարավորինս շուտ թույլատրել զեկույցի հրապարակումը, այն թարգմանել պետական լեզվով եւ այդ թարգմանությունը հանրության համար հասանելի դարձնել: